

ք. Երևան

09.12.2022թ.

Yerevan

09.12.2022

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

Public Television Company of Armenia Closed Joint-Stock Company (hereinafter - the Customer), represented by the Executive Director H. Movsisyan, acting on the basis of the Charter, from one side, and

Nvak Collective PBC, (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Թամար Կապրելյանի մյուս կողմից, (այսուհետ, յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

Nvak Collective PBC (hereinafter - the Executor), represented by the Director Tamar Kaprelian, from the other side (hereinafter separately - the Party, jointly - the Parties), have signed this Contract (hereinafter - the Contract) on the following:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. THE SUBJECT AND TERMS OF THE CONTRACT

1.1 Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի պատվերով մատուցել «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի մրցույթի շրջանակներում Ռոզա Լին երգչուհու ելույթի ապահովման ծառայությունները (այսուհետ՝

1.1 Hereby, the Executor undertakes to provide the services for Rosa Linn's performance within the framework of the "Junior Eurovision 2022" song contest (hereinafter - the Services), and the Customer undertakes to accept the Services and to pay for the Services provided in accordance with this Contract.

Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 The Executor undertakes to provide the Singer participation in rehearsals, to basic experience and basic performance at the concert, Los Angeles-Yerevan Airfare reimbursement, Snap song vocal and musical recording instruments, instrumentation, mix mastering, lyrics for the common song (JESC 2022 theme song) makeup and hairdressing expenses, stage costume provision.

1.2 Կատարողը պարտավորվում է ապահովել Երգչուհու փորձերին մասնակցություն, հիմնական փորձին ու հիմնական համերգին ելույթի ապահովում, Լոս-Անջելես-Երևան-Լոս-Անջելես ավիատոմսի հատուցում, Snap երգի վոկալի և երաժշտական գործիքների վերաձայնագրում, գործիքավորում, միքս մասթերինգ, Մանկական Եվրատեսիլ 2022-ի թեմատիկ երգի խոսքերի, դիմահարդարման ու վարսահարդարման ծախսեր, բեմական հագուստի ապահովում:

1.3 Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցվում են 01.12.2022թ. մինչև 11.12.2022թ. ներառյալ:

1.3. The Services under this Contract shall be provided from 01.12.2022 to 11.12.2022 included.

2. ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐ

2. GUARANTEES

2.1 Կատարողը երաշխավորում է Ծառայությունների մատուցման համար իր պատշաճ մասնագիտական որակավորումը:

2.1 The Executor guarantees its appropriate professional qualification for the provision of the Services.

2.2 Կողմերը երաշխավորում են, որ իրավասու են ստորագրել սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր

2.2 The Parties guarantee that they are authorized to sign this Contract and have all necessary rights, permissions and consents to execute this Contract.

անհրաժեշտ իրավունքները,  
թույլտվությունները և համաձայնությունները:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**
- 3.1.1 Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և սահմանված ժամկետներում
  - 3.1.2 պահանջել Կատարողից իրեն տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն,
  - 3.1.3 ստուգել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,
  - 3.1.4 ցուցումներ տալ Կատարողին Ծառայությունների կատարման վերաբերյալ սույն Պայմանագրի շրջանակներում,
  - 3.1.5 պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս:
- 3.2 Պատվիրատուն պարտավոր է՝**
- 3.2.1 Ընդունել սույն Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունները, իսկ թերություններ և/կամ շեղումները հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին,
  - 3.2.2 Վճարել Կատարողին մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում,
  - 3.2.3 Անհրաժեշտության դեպքում, ապահովել կազմակերպչական և նյութատեխնիկական պայմաններ Ծառայությունների մատուցման համար,
  - 3.2.4 Մույն Պայմանագրի կատարման համար Կատարողին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը:
- 3.3 Կատարողը իրավունք ունի՝**
- 3.3.1 Պատվիրատուից ստանալ սույն Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեղեկատվություն,

**3. THE RIGHTS AND RESPONSIBILITIES OF  
THE PARTIES**

- 3.1. The Customer is entitled:**
- 3.1.1 To demand from the Executor to provide the Services under this Contract in appropriate quality and in the defined terms,
  - 3.1.2 To demand from the Executor to provide information on the process of the provision of the Services,
  - 3.1.3 To verify the process and the quality of the Services provided by the Executor without interfering with the latter's activity,
  - 3.1.4 To give instructions to the Executor regarding the provision of the Services within the framework of this Contract,
  - 3.1.5 To demand from the Executor to support the Customer during the verification of the process and quality of the provision of the Services.
- 3.2 The Customer is obliged:**
- 3.2.1 To accept the Services provided in accordance with this Contract and in case of discovering deficiencies and/or deviations to inform the Executor immediately,
  - 3.2.2 To pay the Executor for the provided Services in the amount, order and terms defined by this Contract,
  - 3.2.3 If necessary, to ensure organizational, material and technical conditions for the provision of the Services,
  - 3.2.4 To provide the Executor with the information necessary for the performance of this Contract.
- 3.3 The Executor is entitled:**
- 3.3.1 To receive from the Customer information necessary for the performance of this Contract.

- |   |   |
|---|---|
| 3.3.2 Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ընդունել պատշաճ մատուցված ծառայությունները,   | 3.3.2 To demand from the Customer to accept the Services duly provided in the order and terms defined by this Contract.   |
| 3.3.3 Սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում ստանալ ծառայությունների դիմաց վճարումը:  | 3.3.3 To receive a payment for the Services in the amount, order and terms defined by this Contract.  |
| <b>3.4 Կատարողը պարտավոր է՝</b> <span style="float: right;"><b>3.4 The Executor is obliged:</b></span>  |   |
| 3.4.1 Ծառայությունները մատուցել անձամբ: Ծառայությունների մատուցմանը երրորդ անձանց ներգրավումը Կատարողի կողմից հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության հիման վրա,  | 3.4.1 To provide the Services personally. Involvement of third parties in the provision of the Services is possible only on the basis of a prior written consent of the Customer,   |
| 3.4.2 Ծառայությունները մատուցել սահմանված ժամկետներում, այն թվում, Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան,   | 3.4.2 To provide the Services in a timely manner, including in accordance with the schedule established by the Customer,  |
| 3.4.3 Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև Ծառայությունների մատուցումը կարգավորող կիրառելի նորմերին, կանոններին և ստանդարտներին համապատասխան,  | 3.4.3 To provide the Services in appropriate quality, in accordance with the requirements of the legislation of the Republic of Armenia, as well as the applicable norms, rules and standards regulating the provision of the Services, |
| 3.4.4 Ծառայությունները մատուցման ընթացքում հետևել Պատվիրատուի կամ նրա կողմից լիազորված անձանց ցուցումներին և պահանջներին,   | 3.4.4 To follow the instructions and requirements of the Customer or its authorized persons during the provision of the Services  |
| 3.4.5 Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել Ծառայությունների մատուցման արդյունքում հայտնաբերված թերությունները և/կամ շեղումները,  | 3.4.5 To eliminate the deficiencies and/or deviations discovered in the provided Services without compensation and in reasonable terms defined by the Customer,   |
| 3.4.6 Պատվիրատուի տարածքում հետևել կիրառելի կանոնակարգերի պահանջներին, որոնց մասին Պատվիրատուին պարտավոր է ծանուցել Կատարողին,  | 3.4.6 To follow the applicable regulations in the territory of the Customer, about which the Customer must inform the Executor,   |
| 3.4.7 Անհրաժեշտ հոգատարություն ցուցաբերել Պատվիրատուի և երրորդ անձանց գույքի նկատմամբ, ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Պատվիրատուի կողմից իրեն ժամանակավորապես տրամադրված գույքը խնայողաբար և կիրառելի կանոններին համապատասխան օգտագործելու համար, | 3.4.7 To provide appropriate care for the property of the Customer and third parties, to take necessary measures to use the property temporarily provided by the Customer carefully and in accordance with applicable rules,            |

**4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

**4. THE ACCEPTANCE OF THE SERVICES**

4.1 Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների հանձնում-ընդունումը արձանագրվում է Կողմերի միջև ստորագրվող կատարողական ակտով (այսուհետ Կատարողական ակտ):

4.2 Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ և/կամ շեղումներ, Պատվիրատուն սահմանում է հայտնաբերված թերությունների և/կամ շեղումների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, որը պարտադիր է Կատարողի համար:

4.3 Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել Ծառայությունները ընդունելուց և ձեռնարկել սույն Պայմանագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցները, եթե Ծառայություններում հայտնաբերվել են թերություններ, որոնք բացառում են դրանց օգտագործումը նախատեսված նպատակով և չեն կարող վերացվել ողջամիտ ժամկետներում:

#### 5. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 14 000 (տասնչորս հազար) ԱՄՆ դոլար և 3 500 (երեք հազար հինգ հարյուր) ԱՄՆ դոլար՝ 20 % (քսան տոկոս) ոչ ռեզիդենտի շահութահարկ:

5.2. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների արժեքը ներառում է բոլոր կիրառելի հարկերը և պարտադիր վճարները, որոնց վճարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

5.3. Պատվիրատուն սույն Պայմանագրով նախատեսված վճարումն իրականացնում է համապատասխան Կատարողական ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց 5 (հինգ) աշխատանքային օրերի ընթացքում՝ անկանխիկ եղանակով:

#### 6. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

6.1. Կատարողը համաձայնվում է, որպեսզի սույն Պայմանագրի շրջանակներում անհրաժեշտ գործողությունների իրականացման համար Պատվիրատուի կողմից իրականացվի իր անձնական տվյալների մշակումը: Սույն կետով նախատեսված անձնական տվյալների մշակումը իրականացվում է այն ժամկետով, որն օբյեկտիվորեն անհրաժեշտ է սույն Պայմանագրի շրջանակներում համապատասխան տվյալները մշակելու նպատակներն իրականացնելու համար:

4.1 The acceptance of the Services under this Contract is made by an act of acceptance signed between the Parties (hereinafter – the Act of acceptance).

4.2 If deficiencies and/or deviations are discovered in the provided Services, the Customer defines a reasonable term for the elimination without compensation of the discovered deficiencies and/or deviations, which is mandatory for the Executor.

4.3. The Customer is entitled to refuse the acceptance of the Services and to take measures provided by this Contract and/or the legislation of the Republic of Armenia, if such deficiencies are discovered in the Services, which exclude their use for the intended purposes and cannot be eliminated in reasonable terms.

#### 5. THE PRICE AND THE PAYMENT OF THE SERVICES

5.1 The total price of the Services under this Contract is 14,000 (fourteen thousand) US dollars and 3,500 (three thousand five hundred) US dollars - 20% (twenty percent) non-resident profit tax.

5.2 The price of the Services under Contract includes all the applicable taxes and mandatory payments, paid in accordance with the legislation of the Republic of Armenia.

5.3 The Customer makes the payment defined by this Contract within 5 (five) working days after the two-way confirmation of the handover-acceptance act and invoice-certificate via banking transfer.

#### 6. PERSONAL DATA

6.1 The Executor agrees to the processing of its personal data by the Customer for the realization of the actions necessary in the framework of this Contract. The processing of the personal data provided by this Clause is carried out in the terms objectively necessary for the purpose of processing of the respective personal data in the framework of this Contract.

6.2. Պատվիրատուն պարտավորվում է իրականացնել Կատարողի անձնական տվյալների մշակումը և պաշտպանությունը համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների:

6.2. The Customer undertakes to carry out the processing and the protection of the personal data of the Executor in accordance with the requirements of the legislation of the Republic of Armenia.

6.3. Կատարողը պարտավորվում է ապահովել Ծառայությունների մատուցման ընթացքում իրեն հայտնի դարձած երրորդ անձանց անձնական տվյալների գաղտնիությունը:

6.3. The Executor undertakes to maintain the confidentiality of the personal data of third parties, revealed to the Executor during the provision of the Services.

## 7 ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

## 7. CONFIDENTIALITY

7.1 Սույն Պայմանագրի պայմաններին, Պայմանագրից բխող գործողություններին, ինչպես նաև Պատվիրատուի նախագծերի, դրանց նկարահանման ընթացքի և բովանդակության վերաբերյալ ողջ տեղեկատվությունը (այդ թվում, փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և Կատարողի կողմից չի կարող տրամադրվել որևէ երրորդ անձանց, բացառությամբ Պատվիրատուի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.1. The entire information (including documents) concerning the terms of this Contract, the actions arising from this Contract, as well as the projects of the Customer, their filming and their content with the exception of publicly available information (if present) is confidential and cannot be provided by the Executor to third parties, except for the cases of a prior written consent of the Customer or cases provided by the legislation of the Republic of Armenia.

7.2. Կատարողը պարտավոր է Պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի լուծումից հետո 3 (երեք) տարվա ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը, գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրվեր իր իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

7.2. During the term of the Contract, as well as within 3 (three) years upon the termination of the Contract, the Customer is obliged to maintain the confidentiality and proper protection of the confidential information, ensuring at least the same measures it would have made for the protection of its own similar information.

7.3. Կատարողը պարտավոր է Պատվիրատուին նախապես տեղեկացնել երրորդ անձանցից ստացված գովազդներին, ֆիլմերին, համերգներին, հարցազրույցներին, հաղորդումներին, ֆոտոշարձերին, հասարակական և այլ նմանատիպ միջոցառումներին մասնակցության առաջարկների մասին և մասնակցել այդ միջոցառումներին Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության հիման վրա:

7.3. The Executor is obliged to inform the Customer beforehand of the offers to participate in advertisements, films, concerts, interviews, programs, photoshoots, public and other similar events received from third parties and to participate in such events on the basis of a prior written consent by the Customer.

7.4. Կատարողը պարտավոր է Ծառայությունները մատուցելիս չխոչընդոտել ինչպես Պատվիրատուի աշխատակիցների, այնպես էլ ծառայությունների մատուցման այլ պայմանագրերի հիման վրա ծառայություններ մատուցող անձանց բնականոն գործունեությանը:

7.4. The Executor is obliged not to hinder the activity of the Customer's employees and persons providing services on the basis of other service provision contracts during the provision of the Services.

7.5. Կատարողը պարտավոր է հետևել արտաքին տեսքի, ներառյալ, հագուստի վերաբերյալ Պատվիրատուի սահմանած կանոններին:

7.5. The Executor is obliged to follow the rules established by the Customer concerning the appearance, including clothing rules.

## 8. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## 8. RESPONSIBILITY

- 8.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
- 8.2. Կատարողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված և/կամ Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակացույցի ժամկետների խախտման դեպքում Կատարողից գանձվում է տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան այդ գումարի 10 (տասը) տոկոսը:
- 8.3. Սույն Պայմանագրով նախատեսված Վարքագծի և էթիկայի կանոններից յուրաքանչյուրի խախտման կամ գաղտնի տեղեկությունների անօրինական հրապարակման յուրաքանչյուր դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել նման խախտման արդյունքում պատճառված վնասների ամբողջական հատուցում, ներառյալ բաց թողնված օգուտը, կամ Կատարողի նկատմամբ կիրառել տուգանք մինչև 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:
- 8.4 Սույն Պայմանագրի 8.2. և 8.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը կարող են հաշվանցվել Կատարողին վճարման ենթակա գումարներից:
- 8.5 Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրով նախատեսված վճարումը ուշացնելու դեպքում Կատարողը իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ վճարման ենթակա գումարի 0,5 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրվա համար, բայց ոչ ավելի քան վճարման ենթակա գումարի 10 (տասը) տոկոսը:
- 8.6 Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 8.7 Տուժանքների վճարումը չի ազատում Կողմերին սույն Պայմանագրով ստանձնած պարտականությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ
- 8.1. The Parties are responsible for non-fulfilment or improper fulfilment of the obligations provided by this Contract.
- 8.2. In case the Executor breaches the timetable provided by this Contract and/or by the Customer, the Executor will pay a fine in the amount of 0.5 percent of the amount subject to payment for each day overdue, but not exceeding 10 (ten) percent of the amount.
- 8.3. In case the Executor breaches any of the behavior and ethic rules provided by this Contract or unlawfully discloses confidential information, the Customer is entitled to demand a complete compensation of the losses borne in the result of such breach, including lost profit, or to apply a penalty against the Executor in the amount of up to 1.000.000 (one million) AMD.
- 8.4. The fine and penalty defined by clauses 8.2 and 8.3 can be set off from the amounts subject to payment to the Executor.
- 8.5. In case the Customer delays the payment defined by this Contract, the Executor is entitled to charge a fine in the amount of 0.5 percent of the amount subject to payment for each day overdue, but not exceeding 10 (ten) percent of the amount subject to payment.
- 8.6. In cases not regulated by this Contract, the Parties bear responsibility for non-fulfilment or improper fulfilment of their obligations in accordance with the legislation of the Republic of Armenia.
- 8.7. The payment of penalties does not release the Parties from the complete fulfillment of the obligations assumed by this Contract if otherwise is not provided by the legislation of the Republic of Armenia.

9.1 Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

9.2 Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 10 ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

10.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև դրանում նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

10.2. Կողմերից որևէ մեկը իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

10.3. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

10.4. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

9.1. The Parties are not responsible for complete or partial non-fulfillment of the obligations assumed under this Contract if it is a result of force majeure, which arose after the conclusion of this Contract and which the Parties could not have foreseen or prevented. Such situations are earthquake, flood, fire, war, declaration of military or emergency state, political riots, strikes, cessation of the work of communication systems, acts of state authorities and other similar circumstances, which render the execution of obligations under this Contract impossible.

9.2. If the duration of force majeure situation exceeds 1 (one) month, each Party is entitled to terminate the Contract informing the other Party beforehand.

## 10 10. CONCLUDING PROVISIONS

10.1. This Contract enters into force from the moment of its bilateral signing and is valid until the complete fulfillment of the obligations provided by the Contract.

10.2. None of the Parties is entitled to transfer its rights and responsibilities under this Contract to a third person without the written consent of the other Party.

10.3. Each clause or term of this Contract is a separate and independent provision. If any provision of the Contract is deemed invalid or not subject to execution in judicial order or by decision of other authorized body, the other clauses of this Contract will remain in force with except for the cases provided by the legislation of the Republic of Armenia.

10.4. The delivery of documents and notifications and the transfer of information under this Contract is made in written form by mail delivery by the addresses of notification or by handing over in person and/or e-mail or in other ways agreed between the Parties.

- 10.5. Սույն Պայմանագրի բոլոր հավելվածները, եթե առկա են, հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:
- 10.5.All the annexes to this Contract, if present, are considered the integral part of this Contract.
- 10.6. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
- 10.6.Any modification and amendment to this Contract is valid if made in writing and signed by the authorized representatives of the Parties.
- 10.7. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած պահի միակողմանիորեն լուծել սույն Պայմանագիրը, այդ մասին առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ ծանուցելով Կատարողին: Կատարողի կողմից սույն Պայմանագիրը միակողմանիորեն վաղաժամկետ լուծելու դեպքում, Կատարողը պարտավոր է հատուցել վաղաժամկետ լուծմամբ Պատվիրատուին պատճառված վնասները ամբողջությամբ, ներառյալ բաց թողնված օգուտը:
- 10.7.This Contract can be early terminated in the order and on the bases provided by the Contract and legislation of the Republic of Armenia, as well as by the mutual agreement of the Parties. The Customer is entitled to terminate this Contract unilaterally at any time by notifying the Executor at least 5 (five) working days before. In case the Executor early terminates this Contract unilaterally, the Executor is obliged to compensate completely the losses borne by the Executor due to the early termination, including the lost profit.
- 10.8. Կողմերից յուրաքանչյուրի հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, վերջինս պարտավոր է պատշաճ կերպով գրավոր ծանուցի մյուս Կողմին այդ մասին համապատասխան փոփոխությունից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 10.8.In case of change in the address, payment or other details, each Party is obliged to inform duly the other Party in written form within 5 (five) working days after the relevant change.
- 10.9. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
- 10.9.All the relations regarding the subject of this Contract and not regulated directly by this Contract are regulated by the legislation of the Republic of Armenia.
- 10.10. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
- 10.10.The disputes arisen from this Contract are solved through negotiations. In case of not reaching an agreement through negotiations, the disputes are solved in judicial order.
- 10.11. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, երկու հավասարազոր օրինակներից: Հայերեն և անգլերեն տարբերակների միջև անհամապատասխանության դեպքում, գերակայում է հայերեն տարբերակը: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:
- 10.11.This Contract is made in Armenian and English languages in two copies of equal legal force. In case of discrepancy between the Armenian and English versions, the Armenian version shall prevail. Each Party is given one copy of the Contract.

ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ / THE DETAILS AND SIGNATURES OF THE PARTIES

Պատվիրատու /Customer

Կատարող /Executor

“Public television company of Armenia” CJSC

Nvak Collective PBC

Address: 26 G. Hovsepyan, 0047, Yerevan, RA

Address: 3435 Ocean Park Blvd. #107-392 Santa Monica, CA 90405

“Inecobank” CJSC

Account Number: 668750018

C/A: 2050022082671001

Routing Number: 021000021

Tax code: 01540062

Bank Name: JP Morgan Chase Bank

Bank Address: 270 Park Avenue New York, NY 10017 SWIFT: CHASUS33



H. Movsisyan/H.Movsisyan

Թամար Կապրելիան / Tamar Kaprelian

Գործադիր տնօրեն /Executive Director

Տնօրեն /Director

